ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **15.10.2021թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների 1/3-ից ավել առաջարկով (Ն. Մկրտչյան, Ա. Ասոյան, Ք. Գրիգորյան, Շ. Դանիելյան)՝ «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ Գ. Գրիգորյանի՝ Խորհրդի անդամության ժամկետը երկարաձգելու հարցը քննարկելու նպատակով որոշվել է անցկացնել էլեկտրոնային քվեարկություն:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2021 թվականի հոկտեմբերի 14-ին և ավարտվել 2021 թվականի հոկտեմբերի 15-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում՝ ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց.

1. «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ Գ. Գրիգորյանի՝ Խորհրդի անդամության ժամկետը երկարաձգելու որոշման կայացում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Վ. Հովհաննիսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ն. Մկրտչյանը քվեարկեց դեմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց դեմ,
3) Ա. Ասոյանը քվեարկեց դեմ,
4) Ա. Խոջոյանը քվեարկեց դեմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց դեմ,
6) Վ. Հովհաննիսյանը քվեարկեց դեմ,
7) Շ. Դանիելյանը քվեարկեց դեմ,
8) Վ. Պետրոսյանը քվեարկեց դեմ:

Քվեարկության արդյունքը՝ 0 կողմ, 8 դեմ:

Խորհրդի անդամներից 2-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ Գ. Գրիգորյանի՝ Խորհրդի անդամության ժամկետը չերկարաձգել:

2. Ընտրել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի նոր անդամ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ